ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1946, № 8 *Общественные науки*

ԴՐԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ — «ԻՄ ՀՈՒՇԵՐԻՑ». Հայպետհրատ, Երևան, 1946, 79 էջ:

Պիտի խոստովանել, որ հայ գրականությունն այնքան էլ հարուստ չէ մեծուարային գրվածքներով։ Եթե մի կողմ թողնենք Պռոշյանի, Աղայանի, Օտյանի և Շիրվանզադեի նուլնատիպ երկերը, ապա հրապարակի վրա մենք չունենք ուրիշ փոքր ի շատե արժեքավոր գրվածք։ Էլ չենք խոսում այն մասին, որ սովետահայ գրականության մյուս սեռերի հետ համեմատած՝ մեծուարային ժանրը բռնում է ամենահետին տեղը։ Մեր ավագ սերնդի գրողներից և ոչ մեկը չի գրել իր հուշերն ու մեծուարները, որոնք հիրավի անգնահատելի նյութ կարող են տալ մեր մոտավոր անցյալի էջերն ուսումնասիրողին։ Այդ պատճառով պետք է հենց սկզբից ևեթ ողջունել Հայպետհրատի խրախուսելի նախաձեռնությունը, որ վերջերս լույս է ընծայել Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ, մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանի «Իմ հուշերից» խորագիրը կրող գիրքը։

Ընդամենը 79 էջից բաղկացած այս գրքում զետեղված են բանաստեղծի հուշերը Աղայանի, Պռոշյանի, Հովհաննիսյանի, Արիմյանի, Թումանյանի, Տերյանի, Նար-Դոսի, անվանի ճարտարապետներ՝ Թ. Թորամանյանի, Ալ. Թամանյանի, ինչպես և նկարիչ Գ. Բաշինջաղյանի ու կոմպոզիտոր Ալ. Սպենդիարովի մասին։

Բանաստեղծը հմուտ ղրչով պատմում է իր հանդիպումներն ու զրույցները, իր տեսածը, ապրածն ու մտածածը, նկարագրում է մոտիկ անցյալի մի շարք գրվագներ ե ապա ինտիմ դիտողություններ նետելով՝ բնութագրում է հայ կուլտուրայի վերը նշված ականավոր դեմքերին։ Վերջիններս ընթերցողի առջև կենդանացրվում են իրենց անձնական վարքագծով ու կենսահայեցողությամբ և հասարակական շահագրգռություններով։ Գործելով այդ մարդկանց շրջանում և առավել կամ նվազ մոտիկ հարաբերությունների մեջ լինելով նրանցից յուրաքանչյուրի հետ՝ հեղինակն իր հիշողությունների մեջ բավական մեծ տեղ է հատկացրել նրանց գործունեությանը, ինչպես և անհատական, կենցաղային մանրամասների լուսաբանմանը։

Ժողովածուն սկսվում է Ղազարոս Աղայանի մասին եղած հուշ-ակնարկով։ Ընթերցողի առջև Աղայանը գծագրվում է որպես ժողովրդի բազմաֆորձ ու հարուստ կյանքի իմաստությունն ամբարած մի լուսավոր գործիչ, որն իր ողջ կյանքի ու գործունեության ընթացքում հանդիսացել է քաջության տիպար։ Սկզբունքային բոլոր հարցերում, ինչպես ընդգծում է Իսահակյանը, Աղայանը ոչ մի գիջում չէր կատարում և անհաշտ կերպով, համառորեն պայքարում էր հանուն իր տեսակետների հաղթանակի։ Այդ համառ

հետևողականությունը նա հանդես է բերել նաև իրրև դրական դաստիարակ։ Անվանի հեղինակը ուշադիր վերաբերմունք է ցույց տվել արվեստի ու գրականության խնդիրներին, առանձնապես դեպի դրական կադրերը և խորապես մահոգվել է հայ դրականության գալիքի նկատմամբ։ Այդ տեսակետից միանգամայն պերճախոս է Իսահակյանի այն վկայությունը, որ վերաբերում է Ագայանին ու Թումանյանին։ Վերջինիս նկատմամբ առաջինի ունեցած հոգատարությունն ու սերը բացահայտված է խորը ու բազմակողմանի կերպով։ Գրեթե նույնպիսի վերաբերմունք է ցուցաբերել Ագայանը նաև դեպի Իսահակյանը, որի առաջին դնահատողներից մեկն է եղել նա։ Այստեղ կան մի շարք տողեր, որոնք բնութագրում են ականավոր այդ հեղինակի հոգեկան տիպարը, նրա նահապետական պարզասրտությունն ու անկեղծությունը, ինչպես և հայրենասիրությունն ու հումանիզմը։ Նույն այս հատկություններով է օժտված նաև Պռոշյանը, որ Իսահակյանի հուշերի մեջ ներկայացված է իր ողջ էությամբ։ Նրա խոհերի ու մտորումների մշտական առանցքը, Իսահակյանի վկայությամբ, կազմում էին հայ աշխատավորության ցավերն ու հոգսերը, մեր մշակույթի պահպանումն ու զարգացումը ե հայ լեզվի ու գրականության խնդիրները։ Ճիշտ է նկատում Իսահակյանը, թե Պռոշյանի բերանով հայ ժողովուրդն էր խոսում իր դարավոր աշխարհազգացողությամբ, կենսահայեցողությամբ ե ապագայի նկատմամբ ունեցած լուսավոր հավատքով։ Նույնիսկ անձնական վշտերի և լիբերալ-բուրժուական քննադատության թշնամական հարվածների տակ նա չկորցրեց իր հավատքը և ամենուրեք հանդիսացավ որպես «կայուն համոզմունքների տեր» մի մարդ, որովհետև նրա լավատեսությունը խարսխված էր մայր ժողովրդի հոգեկան աշխարհի հարստության ե անխորտակ ուժի հստակ գիտակցության ամուր հիմքի վրա։

Հուզիչ է Հովհաննիսյանի մասին գրված հուշ-ակնարկը, որն ըստ էության սրտի խորքից բխած երախտագիտության ջերմ խոսք է դեպի հայ նոր քնարերգության անմահ նահապետը, որ եղել է բանաստեղծի ուսուցիչը թե 'դպրոցական տարիներին, և թե գրական ուսումնառության շրջանում։ Հուշերի մեջ Հովհաննիսյանը հանդես է գալիս ոչ միայն որպես «բանաստեղծության մեծ մոգպետ» (էջ 18), որի անդրանիկ գիրքը արտասովոր ներգործություն ունեցավ ժամանակի երիտասարդության վրա, այլև որպես «բարձր ինտելեկտի մարդ, հազվագյուտ զարգացած, բազմակողմանի կարդացած, դասական ճաշակի և խորունկ կուլտուրայի տեր» (էջ 21) մի անձնավորություն, որ պատիվ կբերեր ամեն մի հասարակության։ Թիստ հետաքրքրական են այն տողերը, ուր հեղինակը նկարագրում է իր աշակերտական տարիներն Էջմիածնում, որտեղ նրա ուսուցիչն էր Հովհաննիսյանը։

Իսահակյանի հուշերի ոսկեշղթայի փայլուն օղակներից մեկն է Հովհ. Թումանյանը, որի հետ, ինչպես հայտնի է, նա կապված է առանձին սիրով ու երկարամյա մտերմությամբ։ Բայց, ցավոք սրտի, Իսահակյանը իր բազմահարուստ հուշերից առայժմ մեզ ներկայացրել է միայն մի հատված՝ «Հով. Թումանյանի հետ Լոռում» խորագրով, որը սակայն պատկերացում է տալիս հանճարեղ Լոռեցու հոգեկան ու բարոյական բարձր հատկություններ մասին։ Ներկա հուշերում Թումանյանը ելնում է ընթերցողի առջև

իբրև իր հայրենի լեռնաշխարհի հարազատ ծնունդ, որը միանգամայն քաջատեղյակ է Լոռու ամեն մի քար ու քարափին, ծառ ու ծաղկին և նրանց մասին եղած հինավուրց զրույցներին ու ավանդություններին և այդ ամենը նրա բանաստեղծական հոգին լցնում էին գերագույն հաճույքով, ստեղծագործական նոր ու հիասքանչ հղացումներով։ «Եվ ինչպես Թումանյանը ներդաշնակում էր Լոռու պեյզաժին՝ բնանկարին, նրա մարմնից մարմին առած, նրա հոգուց հոգի առած,—գրում է Իսահակյանը։ Կարծես Իրանի բանաստեղծ Հաֆըզն էր մտորում Շիրազի վարդաստաններում կամ Պուշկինն էր թափառում Ռուսաստանի բազմաշառաչ անտառների և ծավալուն գետերի եզերքներով» (էջ 27)։ Իսահակյանը շեշտում է Թումանյանի բնավորության մի այլ գիծ ևս. այդ այն է, որ նա «քաջ մարդ էր, լավ հրացանաձիգ, որսկան»։

Միստ արժեքավոր ու ամփոփ են այն ակնարկները, որոնց մեջ հեղինակը իր տպավորություններն է հաղորդում Նար-Դոսի, Վահան Տերյանի և Հակոբ Հակոբյանի մասին։ Դրանք բովանդակալից ու հանրամատչելի հուշեր են, որոնց մեջ հիշյալ հեղինակների կյանքի ու գործունեության երկրորդական մանրամասները անգամ տրված են համոզիչ կերպով։ Ինչորոշ գծերով ու հետաքրքիր անցքերով ներկայացնելով նրանցից յուրաքանչյուրի անհատական կյանքն ու հասարակական գործունեությունը, Իսահակյանն ուշագրավ դիտողություններ է անում առավել հատկանշական դրվագների մասին։ Մասնավորապես նշանակալից է այն փաստը, որ պատմում է նա Հակոբ Հակոբյանի վերաբերյալ. 1905 թվի արյունալից օրերն էին, ցարական միապետության ռեժիմի արյունկզակ հետևորդները գինված փողոց էին ելել՝ կոտորելու ռևոլուցիոն ժողովրդին։ Նույն ժամանակ Լենինականից Իսահակյանը գնում է Թրիլիսի, բայց որևէ օթևան չգտնելով՝ ուշ երեկոյան թափառում է փողոցում, որովհետև ամենուրեք երկյուղից հյուրանոցների դռները փակել էին և հյուր չէին ընդունում։ Հանկարծ այդ պահին հանդիպում է Հակոբ Հակոբյանին, որն իմանալով նրա հուսահատ վիճակը, անմիջապես քաջալերում է և տանում իր բարեկամ արհեստավորներից մեկի տուն։ «Այդ գիշեր նա շատ բարձրացավ իմ աչքում,—գրում է Իսահակյանը,—այդ գիշեր զգացի նրա բանաստեղծության անկեղծությունը» (էջ 44—45)։ Արդարև ռևոլուցիայի բոցաշունչ երգիչը ոչ միայն «աներկմիտ, անհողդողդ» համոզմունքների տեր գործիչ էր, այլև անկեղծ ու սրտացավ ընկեր, որ յուրաքանչյուր քայլափոխին օգնության ձեռք է մեկնում դեպի մերձավորը և ոգևորում նրան թե հոգեպես և թե բարոյապես։

Սույն հուշերի մեջ չափազանց հաջող է գծագրված Մկրտիչ Արիմյանը, որն իր բնավորությամբ, իր ամբողջ հոգու խորությամբ թերևս ամենահետաքրքրական անձնավորություններից մեկն է գրքում հանդես եկող գրական դեմքերի պատկերասրահում։ Իսահակյանը սեղմ տողերի մեջ պատմում է իր հանդիպումներն ու զրույցները նրա հետ և միաժամանակ ընդգծում նրա գործունեության մի շարք հետաքրքրական կողմերը։ Արիմյանը երևան է բերված ինչպես իր անձնական կյանքում, այնպես էլ գրական-հասարակական գործունեության մեջ։

Առանձին ուշադրության են արժանի ժողովածուի նախավերջին երկու

հուշերը։ Դրանք մեծանուն ճարտարապետներ Թ. Թորամանյանի և Ալ. Թամանյանի բնութագրմանը նվիրված ուրվագծեր-պորտրեներ են։ Ըստ էության այդ ակնարկները և՝ մեծարժեք են, և՝ բնութագրական դիտողություններ, որոնց մեջ ակնհայտ մեծությամբ դրսևորվել են հայ կուլտուրայի այդ ականավոր ներկայացուցիչների դիմաստվերները։ Առանձնապես փաստական հարուստ տեղեկություններով է լեցուն Թորամանյանի մասին գրած ակնարկը, ուր հմուտ դրչով տրված են անվանի հայ ճարտարապետի հմայիչ դեմքի հիմնական գծերը։ Այստեղ բավական մանրակրկիտ կերպով լուսաբանված են Թորամանյանի կյանքի ու գործունեության ամենացայտուն էջերը։ Իսահակյանը ցույց է տալիս, թե ինչպիսի՛ ոգևորությամբ էր նա հետազոտություններ կատարում Անիում և որպիսի՛ ուշադրությամբ էր ականջ դնում ժողովրդական ստեղծագործության այն ձայներին, որոնք հնչում էին թե հին հուշարձանների ավերակներում և թե ժամանակակից աշուղի երգերում։ Նույնքան հուզիչ մի ուրվագիծ է Թամանյանի մասին գրածը։ Մեծավաստակ ճարտարապետը, որ այնքան մեծ աշխատանք և տաղանդ էր գործադրել մեր մայրաքաղաք Երևանի շինարարության վրա, տակավին նոր սերնդի համար մնում է չլուսաբանված և սակավահայտ դեմք։ Ներկա հուշերով Իսահակյանը մասամբ լրացնում է այդ թերին։ Ասում ենք մասամբ, որովհետև շատ սեղմ է և հեղինակը բավարարվել է իր ընդհանուր տպավորությունների ամենահակիրճ շարադրմամբ՝ տեղ-տեղ միայն առաջ բերելով մեծագույն գործչի ուշագրավ խոհերն ու դիտողությունները արվեստի ու ճարտարապետության մասին։ Այդօրինակ մի ակնարկ են նաև Ալ. Սպենդիարովին նվիրված տողերը։ Հեղինակն ակներև էնտուզիազմով պատմում է իր վրա նշանավոր կոմպոզիտորի երաժշտական ստեղծագործության թողած հուզիչ ազդեցության, ինչպես և նրա երաժշտական հզացումների, նոր որոնումների մասին։ Իսահակյանը բերում է մի շարք փաստեր, որոնք մի ավելորդ անգամ ապացուցում են, որ Սպենդիարովի երաժշտական կուլտուրայի հմայքը պայմանավորված է հայ ազգային, ժողովրդական երգի և եվրոպական երաժշտության բազմակողմանի ու սինթետիկ իմացությամբ։

Մտերմական տոնով գրված հուշերի մի սեղմ ամփոփում է Գևորգ Բաշինջաղյանին նվիրված հոդվածը, ուր հեղինակն առավելապես ծանրացել է անվանի նկարչի մարդկային հատկությունների վրա ու աշխատել մի քանի գծերով ներկայացնել դրանք։

Մենք շատ սեղմ ենք բնութագրում ժողովածուի մեջ զետեղված նյութերը՝ խորապես համոզված լինելով, որ ընթերցողը բուռն հետաքրքրությամբ պիտի կարդա խիստ բովանդակալից և յուրահատուկ ոճով շարահյուսված այդ ակնարկները։ Բայց և այնպես այժմ անհրաժեշտ ենք համարում կանգ առնել մի քանի մոմենտների վրա, որոնք, մեր կարծիքով, արժանի են առանձին ուշադրության։ Նախ նկատենք, որ ամբողջ ժողովածուի մեջ ամենից առաջ և ավելի որոշակիորեն նկարագրվում է ինքը Ավ. Իսահակյանը՝ հայ ժողովրդի կյանքով ու շահագրգռություններով ապրող մեր մեծ բանաստեղծը։ Հուշերում ցայտուն կերպով դրսևորվել է բանաստեղծի ժողովրդասիրությունը, նրա դեմոկրատական ու հումանիստական աշխարհայեցողությունը, նրա ջերմ ու խանդաղատալից սերն ու հարգանքը դեպի մեր կուլտուրայի բազմաշխատ մշակները։ Հարգանք դեպի

ստեղծագործող մարդը, դեպի նրա վաստակը, ըմբռնողություն նրա որոնումների և անհուն սեր դեպի հայ գրականությունն ու կուլտուրան,— ահա այն առաջին և գլխավոր արժանիքը, որ ունի սույն գիրքը։ Եվ դա փոքր արժանիք չէ. քանի որ հենց այդ պատճառով գիրքը կարդալիս ընթերցողն զգում է օրինական հպարտություն, որ բարձրացնում է նրան հոգեպես և նրա մեջ վերստին բորբոքում անվերապահ սեր ու հարգանք դեպի մեր ժողովրդի բազմադարյան կուլտուրան։

Երկրորդ՝ սույն գրքի միջոցով սկզբից մինչև վերջ կարմիր թելի նման անցնում է մի առողջ ու ճշմարիտ հայացք, որով Իսահակյանը նայում է մեր մոտիկ անցյալի այդ նշանավոր դեմքերին, վեր հանում ու գնահատում նրանց կյանքի ու գործունեության այս կամ այն էջը։ Նշված անձնավորությունները նրա հուշերում ցոլացել ու տպավորվել են ճշգրիտ կերպով, որովհետև հեղինակն օժտված է քննադատական ակնհայտ կարողությամբ։ Այստեղ նրան օգնել է իր ինտուիցիան և մեծ կուլտուրան, արվեստի գաղտնիքների մեջ թափանցող խորունկ միտքը, որոնց շնորհիվ հեղինակը երբեմն խիստ արժեքավոր մեկնություններ է տալիս այս կամ այն գրողի կամ արվեստագետի ստեղծագործություններին։ Այդ տեսակետից միանգամայն ուշագրավ են այն տողերը, որոնց մեջ նա բնութագրում է Հովհաննիսյանի ու Թումանյանի պոեզիայի ժողովրդայնությունը, Տերյանի ստեղծագործության առանձնահատկությունը և Նար-Դոսի ոճը։ Այդ գիծը երևան է եկել նաև Թամանյանի և Սպենդիարովի մասին գրած բնութագրականներում։ Իսահակյանը պարզ կերպով ցույց է տալիս, թե ինչպիսի յուրատեսակ ձևով Թամանյանն ընդունեց հայ կլասիկայի ազգային տրադիցիաները և կարողացավ որոնել ու գտնել այն կենսականը, որ պարունակվում էր նրանց մեջ։ Այս կապակցությամբ տեղին է նկատել, որ Իսահակյանը հանդես է գալիս նաև որպես հայ արվեստի, մասնավորապես ճարտարապետության քաջատեղյակ ու ջերմեռանդ պրոպագանդիստ։

Երրորդ. հուշերում կարելի է գտնել հարուստ, երբեմն նորահայտ տեղեկություններ հիշված գործիչների կյանքի ու գործունեության, ինչպես և ստեղծագործությունների հղացումների վերաբերյալ։ Այսպես, օրինակ, Իսահակյանի վկայությամբ՝ Աղայանը երիտասարդական խանդավառությամբ էր հետևում 1905 թ. ռևոլյուցիոն շարժումներին և «մոտ էր համարում իր երազների, տենչերի, իր ուտոպիայի իրականացումը» (էջ 9)։ Նույնիսկ ռևոլյուցիայի անհաջող վախճանից հետո ողջ երկրում ծայր առած ռեակցիան չսասանեց նրա հավատը լավագույն գալիքի նկատմամբ, որովհետև կապված լինելով ժողովրդի հետ, ինչպես դիպուկ արտահայտվում է հուշերի հեղինակը, «Աղայանը խորքով օպտիմիստ էր»։ Ոչ պակաս արժեք է ներկայացնում այն տեղեկությունը, ըստ որի Թումանյանը մեծապես ոգևորված էր Լոռու շրջակայքում ապրող Զոփունանց տղաների գործունեությամբ, որոնք արիաբար կռվում էին հարստահարող թավադների ու վաշխառուների դեմ։ Այստեղից դժվար չէ համոզվել, որ իսկապես «Հառաչանք» պոեմի նշանավոր ֆրագմենտը մնացորդն է այն հղացման, որ Թումանյանը ծրագրել էր գրել ժողովրդի ծոցից դուրս եկած կտրիճների մասին։ Առավել ևս ուշագրավ է ու հետաքրքրական այն վկայությունը, թե Սպենդիարովն իր կյանքի վերջում հղացել էր «Հայաստան» անունով մի տետրալոգիա, ուր պիտի ներկայացվեր հայ ժողովրդի պատմությունը սկզբից

մինչև իր օրերը, բայց անսպասելի մահը զրկեց նրան այդ հնարավորությունից...

Այնուհետև այդ ակնարկների մեջ մեծ տեղ են գրավում նաև մեր այդ մեծ գործիչների գանազան առիթներով արած դիտողությունները կյանքի, արվեստի ու դրականության վերաբերյալ։ Այդ կարծիքներն ու մտքերը, որոնք ուրիշ տեղ դրի չեն առնված, չափազանց արժեքավոր են տվյալ հեղինակի կամ գործչի հասարակական-դրական հայացքները պարզելու իմաստով։ Օրինակ, 1899 թ. հունվարին աքսորից վերադառնալիս Իսահակյանը մի քանի օր կանգ է առնում Ռոստով-Նախիջևանում, ուր աքսորված էր Աղայանը։ Վերջինս, որ հիվանդությունից նոր էր ապաքինվել, նրա համար ոգևորված կարդում է հենց նոր ավարտած «Ժամանակակից ատենախոսությունը», որ մեծ ազդեցություն է գործում Իսահակյանի վրա. «Ժամանակակից ատենախոսությունը» իմ կտակն է, իմ հավատքը» (էջ 8), բացականչում է հեղինակը և դրանով իսկ շեշտում իր այդ գործի պատմական նշանակությունը։ Ապա հուշերից իմանում ենք, որ Պոռշյանը շատ է սիրել Տոլստոյին «Տոլստոյը օվկիանոս է, օվկիանոս» (էջ 16), —ասել է անվանի վիպասանը Իսահակյանի հետ ունեցած մի զրույցի ժամանակ։ Կամ պարզվում է, որ Երիմյանը արևելահայ բանաստեղծներից առանձնապես մոտիկից ծանոթ է եղել Հովհաննիսյանին, Թումանյանին և Իսահակյանին, որոնց նա սիրել է ամբողջ հոգով։ Նույնքան արժեքավոր են նաև Թումանյանից, Տերյանից և մեր մյուս հեղինակներից բերված խոսքերն ու կարծիքները, որոնք նոր լույս են սփռում նրանց կերպարների բնութագրման վրա։

Հինգերորդ, արժեքավոր այս դիտողությունները, միաժամանակ, որպես փոքրիկ պատառիկներ, հարուստ նյութ կարող են տալ հենց իր՝ Իսահակյանի ստեղծագործական կյանքի վերարտադրման համար։ Այսպես, հուշերից իմանում ենք, որ Իսահակյանը տակավին «12 տարեկանից ոտանավորներ գրելու փորձանքի մեջ է ընկել» (էջ 19), որ նրա մանկական երևակայության վրա խորապես ազդել են Նալբանդյանի «Մանկության օրեր» և Ս. Սահազիզի «Ես գսեցի մի անուշ ձայն» բանաստեղծությունները, որոնց ուժեղ ներգործությամբ կազմավորվել է Իսահակյանի պոետական հաշակը։ Այնուհետև հուշերի հեղինակը խոստովանում է, որ Պոռշյանի «Սոս և Վարդիթեր» վեպը կարդալիս ապրել է «չքնաղ, հափշտակված հոգեվիճակ», շատ է ոգևորվել Աղայանի «Արություն և Մանվել» գրվածքով, որ «պատանեկական իմ դրոհի ու փոթորկի հոգեբանությանը համընկնում էր» (էջ 6)։ Մի այլ տեղ, Հովհաննիսյանի մասին դրած հուշերից տեղեկանում ենք, որ Իսահակյանը մի կարճ ժամանակով եղել է Ռաղմի «Կուլտուրական Միության» հրատարակչական մասի վարիչը և նրա թելադրանքով ու հսկողությամբ են 1908 թ. հրատարակվել Հովհաննիսյանի բանաստեղծությունների հատորը և Ե. Արովյանի «Վերք Հայաստանին»։ Վերջապես, խիստ կարևոր են այն տողերը, որոնց մեջ Իսահակյանը մի շարք տեղեկություններ է հաղորդում «Աբու Լալա Մահարի» պոեմի վերաբերյալ։ Ուշադիր ընթերցողի աչքից չեն կարող վրիպել նաև այն հատվածները, որոնցից պարզվում է, թե ինչպիսի գնահատության է արժանացել ինքը Իսահակյանը մեր ավագ գրողների կողմից։ Այսպես, օրինակ, Աղայանը դեռևս նրա առաջին գիրքը (1898 թ.) կարդալով, նրան անվանել է «շնորհքով բանաստեղծ» (էջ 7),

իսկ Գոշյանը՝ «հայրենաշունչ բանաստեղծ (էջ 13)։ Այս ամենն առավել թանգարժեք են մանավանդ այն պատճառով, որ առկավին հրապարակի վրա չունենք Իսահակյանի բազմաբովանդակ ու նշանակալից կյանքի ամբողջական շարադրանքը։

Վերջապես սույն հուշերի անուրանալի արժանիքներից մեկն էլ պատմողական այն գրավիչ տոնն է, որ հատուկ է Իսահակյանին։ Թվում է՝ ոչ թե գիրք ենք կարդում, այլ խոսքի և զրույցի կախարդից լսում ենք մի հարազատ ու հրաշալի պատմություն։ Հեղինակը սիրով է հիշում իր վաղեմի ծանոթներին, պատմելիս մտովին սլանում է դեպի անցյալը, նրանց միջավայրը և մի պահ ապրում նրանցով։ Ցուրաքանչյուրն իրեն հատուկ կեցվածքով ու ոճով միշտ էլ նշմարվում է թռուցիկ այդ հուշերում ու դիտողություններում։ Կան շատ պատկերավոր դրվագներ ու տրամախոսություններ։ Աղայանի և Թումանյանի տրամախոսությունը, օրինակ, տրված է գեղարվեստական մեծ վարպետությամբ։ Նույնը նաև իր՝ Իսահակյանի և Երիմյանի միջև եղած տրամախոսությունը, որ առավել կենդանի շեշտ է հաղորդում ակնարկի մեջ նկարագրված դրվագներին։

Ավելորդ չենք համարում հիշել, որ «Հրատարակչության կողմից» վերտառությունը կրող ծանոթությունից իմանում ենք, որ «հեղինակը ծրագրել է հուշերի այս շարքը մոտիկ ապագայում լրացնել նոր դեմքերով, ինչպես, օրինակ՝ Կոմիտաս, Մուրացան, Մանուկ Աբեղյան և ուրիշներ։

Մի դիտողություն ներկա ժողովածուի հրատարակության վերաբերյալ։ Գիրքը հրատարակված է անխնամ, խմբագրությունը կատարված է միանգամայն անփույթ, կան աչք ծակող տառասխալներ, աղեղ է շապիկը և, չնայած այդ բոլորին, գինը մատչելի չէ ընթերցող լայն զանգվածներին։

Նման տիպի ժողովածուները պետք է հրատարակել բարձր որակով և խմբագրական բարեխիղճ հսկողությամբ։

ԳՐ. ՍԱՐԳՍՅԱՆ